2) ստացել է (են) *«19» 10 2021թ. N 18/10* փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները) *պարզ*

(նշել փորձաքննության տեսակը)

*«ԱՐՏՇԻՆՆԱԽ» ՍՊԸ, լիցենզիա N 16250-01* կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝________

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների *ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ* հետ:

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել *24 ամսվա* ընթացքում՝

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[] ավարտական ակտի տրամադրումից________ ամսվա ընթացքում

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է *14* էջից, կարված և դրոշմակնքված է *ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ* կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) ____________________ կողմից
(նախագծային աշխատանքների կատարողի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ____________________ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների ____________________ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը ____________________:
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)* Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա ____________________ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) ____________________ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ____________________ տրված սույն
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ ***<u>շինհրապարակում ապահովել ժամանակավոր ցանկապատի և տեղեկատվական վահանակի առկայություն</u>***:
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ. Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2021 թվականի N 1341

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 1050 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի սեպտեմբերի 08-ի N Կ-08092021-07-0063 գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, «Էյ Էյ Էս Ըքաունթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված նոր ճշգրտված հողամասի հատակագիծը, հաշվի առնելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 22-ի N Ք-3313).

1. Աբովյան համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 31-ի «Աբովյան համայնքի 11-րդ փողոցի թիվ 29 շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը հաստատելու մասին» N 1050 որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «470.5» թիվը փոխարինել «369.1» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 27
ք. Աբովյան

ՁԵ 1

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | |
|---|---|
| Սեփականատեր | |
| Արովյանի համայնքապետարան | |

| | | |
|---|---|---|
| Կոտայքի մարզ | ք. Աբովյան | 11-րդ փող. թիվ 29 շենք |
| Մարզ, համայնք, հասցե | | |
| ՀՀ կառ. 26.05.2006թ. N 1022-Ն որոշում | | |
| Հողհատկացման հիմքը | | |

| | |
|---|---|
| Հաստատում եմ | 27.10.2021թ. |
| Համայնքի ղեկավար | Կ.Տ. |
| | Վ. Գևորգյան |
| | անուն, ազգանուն, հայրանուն |




| | |
|---|---|
| Մակերեսը հա | 0.03691 |
| Ծածկագիր | 07-002-0040-0251 |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման համար |

Լրացուցիչ նշումներ.

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |

| Մասշտաբ 1:500 | |
|---|---|
| Որակավորում ունեցող անձ | Տիգրան Աղաջանյան |
| Որակավորման վկայականի համարը | 0378 |
| Ստորագրություն | |
| Իրավաբանական անձի անվանումը | «Է Էլ Էս Ընկերություն» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | 04727363 |
| Ստորագրություն | |

| | | |
|---|---|---|
| ամիս ամսաթիվ | չափագրության | 19.08.2021թ. |
| | հատակագծի կազմման | 18.10.2021թ. |

Կ.Տ.

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 4458639.40 | 8469347.52 | 1.50 |
| 2 | 4458640.77 | 8469348.14 | 1.11 |
| 3 | 4458641.21 | 8469347.13 | 12.46 |
| 4 | 4458652.65 | 8469352.07 | 1.50 |
| 5 | 4458653.95 | 8469352.80 | 17.15 |
| 6 | 4458647.12 | 8469368.53 | 1.50 |
| 7 | 4458645.72 | 8469368.00 | 8.20 |
| 8 | 4458642.45 | 8469375.52 | 12.46 |
| 9 | 4458631.02 | 8469370.55 | 7.85 |
| 10 | 4458634.15 | 8469363.35 | 1.50 |
| 11 | 4458632.76 | 8469362.79 | 16.66 |
| 1 | 4458639.40 | 8469347.52 | |

| 1. Բազմաբնակարան շենքի | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 4458641.21 | 8469347.13 | 12.46 |
| 2 | 4458652.65 | 8469352.07 | 25.57 |
| 3 | 4458642.45 | 8469375.52 | 12.46 |
| 4 | 4458631.02 | 8469370.55 | 25.54 |
| 1 | 4458641.21 | 8469347.13 | |

| | |
|---|---|
| Որակավորում ունեցող անձ | Տիգրան Սահակյան |
| Որակավորման վկայականի համարը | 0376 |
| Ստորագրություն | |
| Իրավաբանական անձի անվանումը | Էյ-Էյ Էս Էքսպերտինգ ՍՊԸ |
| ՀՎՀՀ | 04727363 |
| Ստորագրություն | |

| | | |
|---|---|---|
| ամիս ամսաթիվ | չափագրության | 19.08.2021թ. |
| | հատակագծի կազմման | 18.10.2021թ. |

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2021 թվականի N 1340

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/43/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 11-րդ, 13-րդ և 14-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցված գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Մարիետա Մխիթարյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 20-ի N Ք-3291),

1. Մարիետա Գարմենի Մխիթարյանին պատկանող (հիմք՝ 2021 թվականի հունիսի 14-ի N 14062021-07-0104 վկայական) Աբովյան քաղաքի Է. Պետրոսյան փողոցի թիվ 1/43/1 հասցեում գտնվող 2482.3 քառակուսի մետր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում՝ «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի հոկտեմբերի 19-ին կազմված հատակագծի (կցվում է) համաձայն՝ ինքնակամ կառուցված 375.44 քառակուսի մետր արտաքին մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունը համարել օրինական:

2. Մարիետա Մխիթարյանը պարտավոր է ինքնակամ կառուցված գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսության օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Աբովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին մուծել 1 108 860 (մեկ միլիոն հարյուր ութ հազար ութ հարյուր վաթսուն) դրամ, հակառակ դեպքում՝ սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիետա Մխիթարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 27
ք. Աբովյան

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| Սեփականատեր |
|---|
| Մարիետա Մխիթարյան Գարմենի |

Կոտայք  Արզական  Է. Պետրոսյան փողոց թիվ 1/ 43/1

Մարզ, համայնք, հասցե

Վկ. N 14062021-07-0104

Գրանցման համարը, Ամսաթիվը

Հաստատված է ... 27.10.2021




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.24823 |
| Ծածկագիր | 07-002-0048-0157 |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի, բնակելի կառուցապատման և այլ նպատակային նշանակության |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման |

*Լրացուցիչ նշումներ.*

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Կոորդինատների ցուցակի համար | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

Մասշտաբ 1:1000

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Լևոն Աբրահամյան |
| Որակավորման վկայականի համարը | | 220 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԵՈԼԵՆԴ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 3023406 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 27.04.2021թ |
| | հատակագծի կազմման | 19.10.2021թ |

4.8.

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (անկյուն) կետերի | Y | X | Գծային չափերը |
| 1 | 8468360.227 | 4461506.143 | 83.01 |
| 2 | 8468285.336 | 4461540.952 | 30.07 |
| 3 | 8468290.765 | 4461567.329 | 79.56 |
| 4 | 8468371.984 | 4461533.945 | 31.11 |
| 1 | 8468360.227 | 4461505.143 | |

| 1.Գյուղատնտեսական [illegible] վերաձևվող տարածություն | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (անկյուն) կետերի | Y | X | Գծային չափերը |
| 1 | 8468329.623 | 4461528.399 | 11.07 |
| 2 | 8468334.131 | 4461538.507 | 34.19 |
| 3 | 8468365.358 | 4461524.58 | 10.9 |
| 4 | 8468360.897 | 4461514.634 | 34.17 |
| 1 | 8468329.623 | 4461528.399 | |

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | |
| Որակավորման վկայականի համարը | | 220 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | <<ԳԵՈՂԵՂ >>ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 3023406 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | կատարողության | 27.04.2021թ |
| | հատակագծի կազմման | 19.10.2021թ |

Կ.Տ.

ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | |
|---|---|
| Կոտայք | Աբովյան Է. Պետրոսյան փողոց թիվ 1/43/1 |
| | Մարզ, համայնք, հասցե |
| Սեփականատեր | Մարիետա Մխիթարյան Գարմենի |

H=3.73
h=3.53
D=0.5
d= 0.1-0.6

1.Գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսություն




Լրացուցիչ նշումներ.

1.Գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսություն-Sընդ=375.44քմ

| | | |
|---|---|---|
| Մասշտաբ 1:200 | | |
| Չափագրում կատարող անձ | | Էրիկ Փիրաքյան |
| Որակավորման վկայականի համարը | | 229 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | ԳԵՈԼԵՆԴ ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03023406 |
| Ստորագրություն | | |
| Ամիս ամսաթիվ | չափագրության | 27.04.2021թ |
| | հատակագծի կազմման | 19.10.2021թ |

Կ.Տ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հոկտեմբերի 2021 թվականի N 1339

## ՌԻՏԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման և հաշվի առնելով Ռիտա Համբարձումյանի դիմում-հայտը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 19-ի N Ք-3279).

1. Թույլատրել փոփոխելու Ռիտա Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի N 13092017-07-0037 վկայական) Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 3-րդ շենքի թիվ 1/1 հասցեում գտնվող 213.35 քառակուսի մետր մակերեսով բնակարանի գործառական նշանակությունը հասարակական գործառական նշանակության և ներքին հարդարման աշխատանքներն ավարտելուց հետո այն օգտագործել որպես գրասենյակ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանի գործառական նշանակությունը որպես գրասենյակ փոփոխելուց հետո այն հանել Աբովյան քաղաքի բնակարանային ֆոնդից:

3. Ռիտա Համբարձումյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 58 340 (հիսունութ հազար երեք հարյուր քառասուն) դրամ՝ որպես անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխության ծառայության վճար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռիտա Համբարձումյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 27
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հոկտեմբերի 2021 թվականի N 1338

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 48-րդ հոդվածի և հիմք ընդունելով Թեհմինե Վարդանյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 25-ի N Ք-3321).

1. Աբովյան համայնքի 2021 թվականի բյուջեով նախատեսված «Հիվանդանոցային ծառայություններ» (բաժին 07, խումբ 3, դաս 1) նախահաշվի «4729» հոդվածից 255 000 (երկու հարյուր հիսունհինգ հազար) դրամ փոխանցել «Արամյանց բժշկական կենտրոն» առողջապահական փակ բաժնետիրական ընկերության 115009287197129 հաշվեհամարին՝ Միքայել Մարգարյանի բուժման ծախսերը կատարելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թեհմինե Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 26
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հոկտեմբերի 2021 թվականի N 1337

## «ԷՐԶՐՈՒՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԷՐԶՐՈՒՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2021 թվականի օգոստոսի 13-ի N Տ-482).

1. «ԷՐԶՐՈՒՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
2. «ԷՐԶՐՈՒՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԷՐԶՐՈՒՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 26
ք. Աբովյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

***N 161 «26» հոկտեմբերի 2021թ.***

Օբյեկտ *բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման (հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխոխել որպես բնակելի կառուցապատման հողամաս)*

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

*«Աշխատանքային նախագիծ» (բարձր ռիսկայնության IV-րդ կատեգորիա)* նախագծային փաստաթղթերի մշակման համար

(համառոտ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության փողոց, 10 շինություններ, ծածկագիր՝ 07-002-0077-0085*

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող *«ԷՐԶՐՈՒՄ» ՍՊԸ (ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության փ., 10, հեռ. 37477910911)*

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը *Կառուցապատողների հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման N 26112019-07-0085 վկայական՝ տրված 26.11.2019թ., էսքիզային նախագիծը:*

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)

Առաջադրանքի գործողության ժամկետը *երկու տարի:*

(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1.Հողամասը գտնվում է *նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման*

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2.(*) Հողամասի չափերը *0.1 հա*

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը, (հա))

3. Հողամասի առկա վիճակը *Խոհանոց սրճարան՝ 380.22 քմ, խցաստեղներ՝ 77.7 քմ, պահեստ՝ 10.8 քմ, շինություն՝ 20.0 քմ, պարիսպ՝ 0.55 քմ, շվաքարան՝ 6.5 քմ*

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ բակային ներսակա) առկայությունը (օգտագործումը, ճարտարապետությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլ)

4.(*) Տրանսպորտային պայմանները *ներքաղաքային նշանակության ճանապարհ:*

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5.(*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)
*Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:*

(նախագծվող հողամասում կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6.(*) Կից հողամասեր *Հարևանությամբ գտնվող հասարակական և բնակելի շենքեր և տարածքներ*

(կից հողօգտագործողների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7.Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) ---------

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8.(*) Հատակագծային սահմանափակումներ *Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը*

(անցանկալի գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9.Ճարտարապետահատակագծային պահանջներ *մշակել նախագիծ՝ Աբովյան քաղաքի Բարեկամության փողոցի թիվ 10 հասցեում գտնվող հողամասում՝ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում:*

(Ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

| | |
|---|---|
| 9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | *ըստ նորմերի* |
| 9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | *ըստ նորմերի* |
| 9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) | *մինչև 58.0 մ* |

(սահմանային հարկայնության բարձրությունից գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն.Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))

| | |
|---|---|
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | *համաձայն նորմերի* |
| 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անցրածքին) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) | *մինչև 40 %* |
| 9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) | *60 % և ավելի* |

9.7. այլ պահանջ-ներ

- *Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները*
- *նախագծով նախատեսել հասարակական բազմաբնակարան բնակելի շենքի կառուցում*

| | |
|---|---|
| 10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը | *խոհանոց ործարան՝ 380.22 քմ, խցաանկյակներ՝ 77.7 քմ, պահեստ՝ 10.8 քմ, շինություն՝ 20.0 քմ, պարիսպ՝ 0.55 քմ, շվաքարան՝ 6.5 քմ ենթակա են քանդման* |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | ------- |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | *Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ* |
| 12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2. (*) էլեկտրամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3 . (*) գազամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | *Կցվում է*<br>(համաձայն 22 կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրոնային տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | |
| 12.6. աղբահանություն | |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | *Կազմակերպել տարածքի ջրահեռացում:*<br>(տեղիքի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումներ) |
| 14. Բարեկարգում | *Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել*<br>(կանաչապատման պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, լուսավորում և այլն) |
| 15. Շինարարական նյութեր | *Երկաթբետոնե տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր:*<br>(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ) |
| 16. Պաշտպանական կառույցներ | ———<br>(առանձնակի իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումներ) |
| 17. Հակահրդեհային պահանջներ | *Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները*<br>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումներ) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | *ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժը* |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | *ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները*<br>(շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանելու միջոցառումներ) |
| 20. Շինարարության կազմակերպում | -----------<br>(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ) |
| 21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը | *երկու տարի ճարտարապետական մաս և կոնստրուկտիվ մաս*<br>(Նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը) |

Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

| | |
|---|---|
| 22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ | *ենթակա է պետական համալիր փորձաքննության, ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշում*<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին) |
| 23. Միջանկյալ համաձայնեցում | *Համաձայնեցում Աբովյան համայնքի ղեկավարի հետ*<br>(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշ... նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ 22 կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում) |
| 24. Հասարակական քննարկումներ | ———<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով) |
| 25. Համաձայնեցումներ | • *Համաձայնեցում Աբովյան համայնքի ղեկավարի հետ:*<br>• *Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ*<br>• *Համաձայնեցում հարևան հողամասի սեփականատեր(երի) (օգտագործող(ների)) հետ*<br>(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև 22 կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ) |
| 26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում | ———— |
| 27. Այլ պայմաններ | • *Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. ի.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ի.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:*<br>• *Բազմաբնակարան բնակելի շենքը նախագծել ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի n 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 263-Ն հրամանով հաստատված դրույթներին համապատասխան:*<br>• *Նախագիծը ներկայացնել համաձայնեցման երկու օրինակից:* |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2021 թվականի N 1336

## ԷԴԳԱՐ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Էդգար Սաֆարյանի հայտը (մուտք՝ 2021 թվականի սեպտեմբերի 13-N Ք-2958).

1. Էդգար Սաֆարյանին տալ ավտոտնակի վերակառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
2. Էդգար Սաֆարյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդգար Սաֆարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 26
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

*N 160 «26» հոկտեմբերի 2021թ.*

Օբյեկտ *ավտոտնակի վերակառուցման*

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերակազմում, գործառնական նշանակության փոփոխություն)

*«Աշխատանքային նախագիծ» (միջինից բարձր, II-րդ կատեգորիա)* նախագծային փաստաթղթերի մշակման համար

(համլիրծ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 1-ին միկրոշրջան թիվ 8/461, ծածկագիր՝ 07-002-0086-0445*

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող *Էդգար Սաֆարյան (ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Երիտասարդական փ., 4 շ., 26 բն., հեռ. +37499966000)*

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը *Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման N 17062021-07-0079 վկայական՝ տրված 17.06.2021թ., էսքիզային նախագիծ*

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)

Առաջադրանքի գործողության ժամկետը *մեկ տարի:*

(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1.Հողամասը գտնվում է *նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման*

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2.(*) Հողամասի չափերը *0.008795 հա*

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը, (հա))

3. Հողամասի առկա վիճակը *առկա է ավտոտնակ 70.18 քառակուսի մետր մակերեսով*

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլ)

4.(*) Տրանսպորտային պայմանները *ներքաղաքային նշանակության ճանապարհ:*

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5.(*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

*Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:*

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6.(*) Կից հողամասեր *Հարևանությամբ գտնվող բնակելի տներ, հողամասեր և տարածքներ*

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7.Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) ---------

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8.(*) Հատակագծային սահմանափակումներ *Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը*

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9.Ճարտարապետահատակագծային պահանջներ *մշակել նախագիծ՝ Աբովյան քաղաքի 1-ին միկրոշրջանի թիվ 8/461 հասցեում գտնվող հողամասում՝ ավտոտնակի վերակառուցման՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում:*

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, սանդերքի, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

| | |
|---|---|
| 9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | *ըստ նորմերի* |
| 9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | *ըստ նորմերի* |
| 9.3. բույլատրելի բարձրությունը (մետր) | *մինչև 9.2 մ* |

(սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն.Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))

| | |
|---|---|
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը<br>(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | *համաձայն նորմերի* |
| 9.5. կառուցապատման տոկոսը<br>(կառուցապատվող (անցրադիցի) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) | *մինչև 100 %* |
| 9.6. կանաչապատման տոկոսը<br>(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) | ----- |

9.7. այլ պահանջ-ներ

- *Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները*
- *նախագծով նախատեսել ավտոտնակի վերակառուցում*

| | |
|---|---|
| 10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը | --------------- |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | ------- |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | *Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ* |
| 12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2. (*) էլեկտրամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3 . (*) գազամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | *Կցվում է*<br>(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրոնային տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | |
| 12.6. աղբահանություն | |

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — *Կազմակերպել տարածքի ջրահեռացում:*

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում — *Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել*

(կանաչապատման պահպանման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, լուսավորում և այլն)

15. Շինարարական նյութեր — *Երկաթբետոնե տարրեր, բարե շար, ապակի, մետաղական տարրեր:*

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ — ______

(առանձնակի խոցելիություն ունեցող օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ — *Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները*

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — *ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժը*

19. Շրջակա միջավայրի պահպանում — *ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները*

(շրջակա միջավայրի վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում — ______

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — *մեկ ու կես տարի ճարտարապետական մաս և կոնստրուկտիվ մաս*

(Նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — *ենթակա է պարզ փորձաքննության. ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշում*

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի նախաձեռնությամբ՝ հետագա կառուցման համապատասխան իրավական ակտի)

23. Միջանկյալ համաձայնեցում — *Համաձայնեցում Արովյան համայնքի ղեկավարի հետ*

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ — ______

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումներ

- *Համաձայնեցում Արովյան համայնքի ղեկավարի հետ:*
- *Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ*
- *Համաձայնեցում հարևան հողամասի սեփականատեր(երի) (օգտագործող(ների)) հետ*

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում — ------------

27. Այլ պայմաններ

- *Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. ն.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ն.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:*
- *բնակելի տունը նախագծել ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի ո 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 263-Ն հրամանով հաստատված դրույթներին համապատասխան:*
- *Նախագիծը ներկայացնել համաձայնեցման երկու օրինակից:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2021 թվականի N 1335

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԻՍԻ ՓՈՂՈՑԻ 1/85 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ռաչիկ Գևորգյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի սեպտեմբեր 17-ի N Ք-2997).

1. Աբովյան քաղաքի Հատիսի փողոց 1/85 հասցեի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 32.0 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 32.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով (27.2 քառակուսի մետր ներքին մակերեսով) հասարակական կառուցապատման խանութը համարել Աբովյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է):

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ քաղաք Աբովյան,Հատիսի փողոց, 85/1 շինություն:

5. Սույն որոշումն ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում տրամադրել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը:

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Ռաչիկ Գևորգյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 26
ք. Աբովյան

Ձև 1

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | |
|---|---|
| Սեփականատեր | |
| Արովյանի համայնքապետարան | |
| | |
| | |

Կոտայքի մարզ    ք. Աբովյան    Հատիսի 1/85/1

Մարզ, համայնք, հասցե

ՀՀ կառ. 26.05.2006թ. N 1022-Ն որոշում

Հողահատկացման հիմքը

| | |
|---|---|
| Հաստատում եմ | 26.10.2021թ. |
| Համայնքի ղեկավար | Կ.Տ. |
| | Պ. Գևորգյան |
| | անուն, ազգանուն, հայրանուն |




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.0032 |
| Ծածկագիր | 07-002-0039- |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Հ աս ար ակ ակ ան կառուցապատման |

*Լրացուցիչ նշումներ.*

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 4460448.23 | 8469323.39 | |
| | | | 6.95 |
| 2 | 4460454.70 | 8469325.93 | |
| | | | 4.71 |
| 3 | 4460452.98 | 8469330.32 | |
| | | | 6.95 |
| 4 | 4460446.58 | 8469327.59 | |
| | | | 4.51 |
| 1 | 4460448.23 | 8469323.39 | |

Մասշտաբ 1:200

| | |
|---|---|
| Որակավորում ունեցող անձ | Տիգրան Սահակյան |
| Որակավորման վկայականի համարը | 0378 |
| Ստորագրություն | |
